

ՎՐԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅԱՅ ՄԻՕՐՅԱ ԹԵՐԹԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ՎԼԱԴԻՄԻՐ ՄԱՂԱԼՅԱՆ

Խորհրդային իշխանության առաջին տարիներին «կյանքն ինքը ծնեց և ասպարեզ հանեց մամուլի այնպիսի նոր տարատեսակներ, որոնք առավել հարմար, շարժունակ ու հրատապ էին, ամենալայն մասսաներին արագ հասնող և սրտամոտ ու հասկանալի նրանց»¹: Այսպիսի պարբերականների շարքը պետք է դասել նաև ժամանակին լայն տարածում գտած միօրյա թերթերը:

Միօրյա թերթերը, ինքնին հասկանալի է, պարբերական բնույթ չեն ունեցել: Դրանք լույս են տեսել առիթից առիթ՝ նվիրված այս կամ այն նշանավոր իրադարձությանը, համամիութենական ու միջազգային տոներին, պետականորեն սահմանված հիշարժան օրերին, հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքի այլևայլ բնագավառների նվաճումներին և այլ խնդիրների: Այդ թերթերը, ինչպես հատուկ է պարբերական մամուլին, ունեն գլխագիր (վերնագիր), որը հաճախ ուղեկցվել է կոչերով: Դրանք տպագրվել են լրագրերին բնորոշ հաստատուն չափերով², պարունակում են իրենց լույսընծայման տեղի ու ժամանակի (օր, ամիս, տարեթիվ), ինչպես նաև խմբագրի ու խմբագրական խորհրդի, տպագրող կազմակերպության ու տպարանի, դրանց գտնվելու վայրի, տպաքանակի և այլնի մասին տեղեկություններ: Սակայն այդ թերթերը չունեն համարակալում, ինչը վերոհիշյալ անհրաժեշտ տեղեկությունների հետ մեկտեղ պարբերական մամուլի բնորոշ և ամենակարևոր հատկանիշն է: Միայն համարակալումով են պարբերական հրատարակությունները տարբերվում մյուս տպագիր արտադրանքից: Եվ հենց համարակալում չունենալու պատճառով էլ հիշյալ թերթերը կոչվում են «միօրյա», այսինքն՝ միայն մեկ անգամ լույս տեսած՝ առանց համարանիշի:

Այս հանգամանքը նկատի ունենալով՝ որոշ մատենագետներ այդ թերթերը պարբերական մամուլի իրենց կազմած ցուցակներում չեն ընդգրկում: Օրինակ՝ Գ. Լևոնյանը իր կազմած հայոց պարբերական մամուլի լիակատար ցուցակի առաջաբանում գրում է. «Բիբլիոգրաֆիական այլևայլ աշխատությունների, տեղեկատուների և գրացուցակների մեջ մեզանում հաճախ շփոթում են **պարբերական մամուլի բաժինը***, նրա մեջ մտցնելով ամեն տեսակի **միանուն** հրատարակություններ...., որոնք ոչ մի կապ չունեն լրագրության հետ: Ներկա աշխատության մեջ չկան ոչ միայն այդ կարգի հրատարակությունները, այլև չեն մտած.

¹ "Партийная и советская печать в борьбе за построение социализма и коммунизма", ч. I (1917-1941 гг.), М., 1961, с. 49.

² Դրանք 70 X 52 սմ կամ 54 X 36 սմ չափերի են և հիմնականում ունեն 2-4 էջ ծավալ, առանձին դեպքերում՝ նաև 4-8 էջ:

* Այս և հետագա հղումներում կատարված ընդգծումները հեղինակներին են – Վ. Ս.:

ա) **Միօրյա թերթերը**, որոնք սովորաբար լույս են ընծայված մի անգամ, հատուկ այս կամ այն տոնի ժամանակ, հատուկ այս կամ այն օրվա առթիվ և իրենց վրա էլ համար չեն կրում՝ շարունակելու դիտավորություն չունենալով»³:

Միօրյաներից բացի՝ նա թվարկում է նաև պատի թերթերը, ձեռագիր ու խմորատիպ թերթերը, հայատառ թուրքերեն լրագրերը և օրացույցները, որոնք նույնպես չի մտցրել իր ցուցակում: Ինչպես տեսնում ենք, անվանի բանասերն ու մատենագետը միօրյա թերթերը ոչ միայն համարում է «լրագրության հետ ոչ մի կապ չունեցող» «միանուն հրատարակություններ», այլև պարզապես դրանք իր ցուցակի մեջ չի մտցնում «միայն մեկ անգամ լույս տեսած» լինելու և «իրենց վրա համար չկրելու» պատճառով:

Հայ պարբերական մամուլի մեկ այլ մատենագետ՝ Մ. Բաբլոյանը, միօրյա թերթերի մասին գրեթե նույն կարծիքն է հայտնում: Նա ևս իր մատենագիտական համահավաք ցուցակի առաջաբանում գրում է. «Հայտնի է, որ **պարբերաբար լույս տեսնող հրատարակությունների** տեսակները շատ են ու բազմազան և ոչ բոլոր դեպքերում են համընկնում **պարբերական մամուլ** հասկացության հետ: Այդ հասկացության ճիշտ սահմանումը և նրա հետևողական կիրառումը կարևոր նշանակություն ունի մասնավորապես մատենագիտական ցուցակ կազմելիս: Պարբերական մամուլի մաս չեն կազմում, անշուշտ, զանազան օրացույցները, չհաշված որոշ բացառություններ: Շատ աշխատություններ լույս են տեսնում պարբերաբար հրատարակվող պրակների ձևով: Չանազան ընկերություններ ու կազմակերպություններ հրատարակում են իրենց տարեկան հաշվետվությունները, տեղեկատվությունները կամ այլ նման գործեր նույնպես պարբերաբար: Սակայն դրանցից շատերը, իրենց նեղ և նույնատիպ բովանդակությամբ, դեռևս մամուլ չեն, առնչություն չունեն լրագրության կամ, ավելի լայն առումով վերցրած՝ ժուռնալիստիկայի, հրապարակախոսության հետ:

Ցուցակի մեջ մենք խուսափել ենք մտցնել այդպիսի հրատարակությունները: Տեղ չենք տվել ցուցակում նաև այն հրատարակություններին, որոնք թեև այս կամ այն ձևով առնչվում են լրագրության հետ, սակայն պարբերական մամուլ չեն: Մամուլի մատենագիտության մեջ հրատարակությունը պարբերական համարելու հիմնական սկզբունքը, որ կիրառել ենք նաև մենք, նրա **դադարեցման ժամկետ չսահմանելն է**: Բոլոր միօրյա, միանվագ, բացառիկ ու առիթից առիթ լույս տեսած հրատարակությունները, այսպիսով, չեն կարող դասվել պարբերական մամուլի շարքը»⁴:

Ինչպես տեսնում ենք, այստեղ ևս հստակ ընդգծվում է, որ մատենագետը «միօրյաները» իր համահավաք ցուցակի մեջ չի մտցրել՝ հինք ընդունելով միայն դրանց «դադարեցման ժամկետ չսահմանելու» հանգամանքը, այսինքն՝ միայն մեկ անգամ լույսընծայումով սահմանափակվելը, թեև դրանք ևս, նրա համոզմամբ, «այս կամ այն ձևով առնչվում են լրագրության հետ»:

³ «Հայոց պարբերական մամուլը. լիակատար ցուցակ հայ լրագրության սկզբից մինչև մեր օրերը (1794–1934)», առաջաբանով, ներածությամբ, ծանոթագրություններով և աղյուսակներով կազմեց Գ. Լևոնյանը, Եր., 1934, էջ IX:

⁴ «Հայոց պարբերական մամուլը. մատենագիտական համահավաք ցուցակ (1794–1980)», (կազմող՝ Մ. Բաբլոյան), Եր., 1986, էջ 17-18:

Հայ պարբերական մամուլին նվիրված Ա. Կիրակոսյանի մատենագիտության⁵ մեջ «միօրյաները» առանց որևէ տարբերակման ու սահմանափակման ամբողջությամբ ընդգրկված են պարբերական հրատարակությունների շարքը: Հեղինակը իր կազմած բոլոր ցուցակներում ու հավելվածներում մյուս թերթերի հետ համահավասար ներկայացրել է ԽՍՀՄ գրադարաններում ու արխիվներում պահպանվող հայերեն իրեն հայտնի բոլոր «միօրյաները»: Այսուհանդերձ, չի փորձել բնութագրել միօրյա թերթերը և դրանք զատել մյուս լրագրերից:

Հայ պարբերական մամուլի ու գրատպության մեկ այլ նշանավոր մատենագետ՝ Հովհ. Պետրոսյանը, միօրյա թերթերն ընդհանրապես չի զետեղել իր կազմած եռահատոր մատենագիտության մեջ: Այդ մեծածավալ աշխատության 3-րդ հատորը, որի մեջ պետք է ընդգրկվեին այդ թերթերը, նախորդել է առաջին և երկրորդ հատորների տպագրությանը և նվիրված է հայ բուլշևիկյան և խորհրդահայ մամուլին⁶: Հեղինակը ոչ միայն իր կազմած ցանկերում ու ցուցակներում, այլև նրա ընդարձակ առաջաբանում «միօրյաների» մասին ոչ մի ակնարկ չի անում: Մյուս երկու հատորներում⁷ դարձյալ ոչ մի խոսք չկա այդ թերթերի մասին, որից և կարելի է եզրակացնել, որ հեղինակը միօրյա թերթերը պարբերական մամուլի տեսակ չի համարել:

Ի տարբերություն մատենագետների՝ մամուլի պատմաբանները միօրյա թերթերին գրեթե չեն անդրադարձել: Նրանցից ոմանք նույնիսկ «միօրյաների» և պարբերական հրատարակությունների միջև ոչ մի առնչություն չեն տեսնում: Գուցե այդ է պատճառը, որ ԽՍՀՄ մամուլի պատմությանը նվիրված աշխատություններում և առանձին մենագրություններում այս թերթերի գոյության մասին գրեթե չի խոսվում⁸: Միօրյա թերթերը հիշատակված չեն նաև "Большая советская энциклопедия" և «Հայկական սովետական հանրագիտարան» բազմահատոր հրատարակություններում: Արտասահմանյան մամուլի պատմաբաններից, օրինակ, Ս. Ա. Միխայլովը մամուլի ծագման արշալույսին՝ XVI–XVII դարերում, Անգլիայում, Գերմանիայում, Ֆրանսիայում, Իտալիայում և այլուր տպագրված համարակալում չունեցող թերթերի պահպանված հատուկեմտ օրինակները նմանեցնում ու համեմատում է խորհրդային առաջին տարիներին հրատարակված միօրյա թերթերի հետ և նշում, որ այն ժամանակ էլ դրանք տպագրվել են առանց համարակալման և շատ դեպքերում նույնիսկ առանց տարեթվի ու նվիրվել են միջազգային առևտրական կարևոր նշանակություն ունեցող նավահանգիստների ու ծովային ճանապարհների, խո-

⁵ Տե՛ս «Հայ պարբերական մամուլի մատենագիտություն (1794–1967)» (համահավաք ցանկ, կազմող՝ Ա. Կիրակոսյան, խմբագրությունը և առաջաբանը Հ. Կոստանյանի և Հ. Սիլվանյանի), Եր., 1970:

⁶ Տե՛ս «Հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիա», հ. 3, Հայ բուլշևիկյան մամուլը (1902–1920 թթ.), Սովետահայ մամուլը (1920–1954 թթ.), (կազմող՝ Հովհ. Պետրոսյան), Եր., 1954, LXIV + 688 էջ:

⁷ Տե՛ս «Հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիա», հ. 1 (1794–1900 թթ.) (առաջաբանով ու ծանոթագրություններով, կազմող՝ Հովհ. Պետրոսյան), Եր., 1956, XVI + 748 էջ, նույնը, հ. 2 (1900–1956 թթ.), (առաջաբանով ու ծանոթագրություններով, կազմող՝ Հովհ. Պետրոսյան), Եր., 1957, XXVIII + 624 էջ:

⁸ Օրինակ՝ խորհրդահայ մամուլի պատմաբան Հ. Ֆելեքյանը իր «Հայաստանի պարբերական մամուլը» (Եր., 1970, 560 էջ) մենագրության մեջ միայն երկու առիթով է հիշատակում միօրյա թերթերի մասին (տե՛ս էջ 465 և 545)՝ առանց որևէ բնութագրումների ու վերլուծությունների:

շոր քաղաքների շուկաների ու ապրանքների գների և այլ կենսական նշանակություն ունեցող խնդիրների կամ էլ հիշարժան իրադարձությունների մասին հավաստի տեղեկությունների հաղորդմանը⁹: Ինչպես տեսնում ենք, շուրջ չորս հարյուր տարի առաջ տպագրված թերթերի ու նորագույն ժամանակների «միօրյաների» նպատակները նույնն են եղել՝ ընթերցողներին հասցնել նրանց հետաքրքրող հարցերի մասին ճիշտ տեղեկություններ:

Միօրյա թերթը բնութագրող առանձին բառահոդված ենք գտնում Ե. Ի. Շամուրինի մասնագիտական բառարանում¹⁰: Նա թերթերի այդ տեսակի մասին գրում է. «Թերթի ձև ունեցող հոդվածների ու նյութերի ժողովածու՝ տպագրված հասարակական-քաղաքական որևէ միջոցառման, հոբելյանական տարեթվի, նշանավոր օրվա և այլնի անցկացման կապակցությամբ»¹¹: Միօրյա թերթի այսպիսի մեկնաբանությունը, մեր կարծիքով, հստակ չէ, թերի է: Չենք կարող համաձայնել բառարանի հեղինակի այն բնորոշման հետ, թե միօրյա թերթը «նյութերի ու հոդվածների ժողովածու» է: Մի կողմից նա ճիշտ է բնութագրում, որ այդ թերթերը սովորական լրագրի տեսք ու ձև ունեն և նվիրված են այս կամ այն համաժողովրդական, համապետական հնչեղություն ունեցող իրադարձությանը: Մյուս կողմից անընդունելի է այդ թերթերը «հոդվածների ու նյութերի ժողովածուներ» անվանելը:

Միօրյա թերթերը հոդվածների ու նյութերի ժողովածուներ չեն և չեն էլ կարող լինել, քանի որ դրանք, իրոք, թերթի տեսքով ու ձևով և պարբերակներին բնորոշ այլ առանձնահատկություններով օժտված լրագրեր են: Եվ դրանց պարունակությունը ո՛չ թե միանման նյութեր ու հոդվածներ են, այլ լրագրային տարբեր ժանրերով ու աշխույժ լեզվով գրված հրապարակախոսական բնույթի կենդանի ելույթներ, որոնք վեր են հանում տվյալ օրվա տոնական իրադարձության հետ կապված և տվյալ պահին հասարակությանը հուզող ու հետաքրքրող կենսական խնդիրներ, բացահայտում են դրանց սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական ու մշակութային նշանակությունը և առնչությունն ընթացիկ կյանքի հետ:

Այդ թերթերն ունեն մամուլին բնորոշ մեկ այլ կարևոր առանձնահատկություն ևս, որի շնորհիվ դրանք ավելի նման են պարբերական հրատարակությունների, քան ժողովածուների: Դա հետևյալն է. «միօրյաները» մեծ մասամբ բացվում են առաջնորդող հոդվածով, մի բան, որը բնորոշ է միայն լրագրերին: Այդ առաջնորդողներում ընդգծվում են թե՛ տվյալ թերթի լույսընծայման նպատակները և թե՛ այն խնդիրները, որոնք ծառայած են ժողովրդի առջև և սպասում են իրենց լուծմանը: Եվ վերջապես, միօրյա թերթերը իրենց էջերում, բազմազան նյութերից բացի, պարունակում են նաև ընթացիկ կյանքից վերցված և մարդկանց առօրյան պատկերող լուսանկարներ ու ծաղրանկարներ, մի բան, որ հազվադեպ է պատահում նյութերի և հոդվածների ժողովածուներում:

Այս ամենով միօրյա թերթերը սերտորեն կապվում են պարբերական մամուլի հետ, և, մեր խորին համոզմամբ, դրանք ևս պետք է դասել լրագրերի շարքը և ուսումնասիրել որպես մամուլի մի առանձին տեսակ:

⁹ Տե՛ս Михайлов С. А. История зарубежных СМИ. СПб., 2006, էջ 54-55:

¹⁰ Տե՛ս Шамурин Е. И. Словарь книговедческих терминов для библиотекарей, библиографов, работников печати и книжной торговли. М., 1958:

¹¹ Նույն տեղում, էջ 188:

Ինչպես նշեցինք, միօրյա թերթերը հիմնականում տպագրվում էին հեղափոխական տոների, նշանավոր իրադարձությունների, համամիութենական ու միջազգային օրերի առթիվ: Դրանք տալիս էին այդ տոների կամ օրերի պատմությունը, պարզաբանում դրանց ծագման ու արմատավորման որոշ մանրամասներ: Այդ ամենի հետ մեկտեղ «միօրյաները» հետապնդում էին գաղափարաքաղաքական ու քարոզչական, դաստիարակչական ու կազմակերպական կարևոր նպատակներ, ընթերցողների ուշադրությունը սևեռում երկրի առջև ծառայած հիմնական խնդիրների լուծման ու աշխատավորության իղձերի իրականացման վրա: Այդպիսի նպատակներ են հետապնդել նաև Թիֆլիսում 1920-ական թթ. հրատարակված հայերեն միօրյա թերթերը:

Այսօր 90 տարվա վաղեմություն ունեցող այդ թերթերն ուսումնասիրելով՝ մենք աշխատել ենք հարազատ մնալ պատմականության սկզբունքին և դրանք ներկայացնել այնպես, ինչպես որ ընդունվել ու ընկալվել են այն օրերին: Մեր նպատակն է՝ ներկայացնել Վրաստանի խորհրդահայ միօրյա թերթերի ընդհանուր բնութագիրը, մի բան, որը հայ իրականության մեջ կատարվում է առաջին անգամ: Այդ թերթերը, գաղափարաքաղաքական սուր ուղղվածություն ունենալուց բացի, ունեին նաև տնտեսական ու գիտամշակութային կարևոր նշանակություն: Դրանց հրատարակումը Թիֆլիսում այն ժամը տարիներին մեկ անգամ ևս վկայում է Վրաստանի կյանքում հայ ազգաբնակչության խաղաղած ծանրակշիռ դերի մասին:

Միօրյա թերթերը հիմնականում հրատարակվել ու տարածվել են խորհրդային իշխանության առաջին տարիներին ոչ միայն Անդրկովկասում, այլև Ռուսաստանում: Դրանք տպագրվել են տարբեր լեզուներով, այդ թվում և հայերեն: Մինչև 1935 թ. հրատարակված հայերեն «միօրյաների» ընդհանուր թիվը անցնում է 75-ից, որոնցից 6-ը տպագրվել է Թիֆլիսում¹²: Դրանք, որպես ժամանակի թելադրանքով ծնված օպերատիվ քարոզչամիջոցներ, լավագույնս են ծառայել իրենց նպատակին: Այդ թերթերը մեկ օրվա շրջագծում արտացոլել են տվյալ ժամանակահատվածի բազմաթիվ կյանքի խտացված պատկերը:

Վրաստանի խորհրդահայ առաջին միօրյա թերթը եղել է **«Օգնիր Հայաստանին»**՝ վերտառությամբ Հայաստանի օգնության կոմիտեի Վրաստանի մասնաճյուղի հրատարակությունը, որը լույս է տեսել Թիֆլիսում 1922 թ. փետրվարին: Ցավոք, այս թերթի ոչ մի օրինակ մեզ չհաջողվեց գտնել Երևանի ու Թբիլիսիի արխիվներում ու գրադարաններում: Նրա գոյության փաստը, առանց սկզբնաղբյուրի վկայակոչման, արձանագրված է Մ. Բաբլոյանի կազմած հիշյալ մատենագիտական համահավաք ցուցակում¹³, ուստի առայժմ նրա բովանդակության մասին ոչինչ ասել չենք կարող:

Վրաստանի խորհրդահայ մյուս միօրյա թերթը՝ **«Բանվորուհու միջազգային օրը»**¹⁴, լույս է տեսել 1922 թ. մարտի 8-ին Թիֆլիսում: Այն բացվում է «Կեցցե՛ք բանվորուհիների և բանվորների միջազգային միությունը՝ պրոլետարիատի դիկտատուրայի համար սկսած կռվի մեջ» կոչով:

¹² Տե՛ս Մ. Բաբլոյան, նշվ. աշխ., էջ 451-452:

¹³ Տե՛ս նույն տեղը, էջ 452:

¹⁴ «Բանվորուհու միջազգային օրը» թերթն ունի «Օրգան Վրաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմին կից կանանց մեջ աշխատանք տանող բաժնի» ենթաանվանումը: Ծավալը՝ 2 էջ, չափսը՝ 70 X 43 սմ, տպաքանակը՝ 1000: Ստորագրված է՝ «Խմբագրական կոլեգիա»:

«Դիմում Վրաստանի աշխատավոր կանանց» առաջնորդողում նշված է. «Այսօր մեզ բոլորիս միացնում է մի միտք, մի ցանկություն՝ ոչնչացնել այն ստրկությունը, որի մեջ ամենից ավելի գտնվում են բանվորուհին և գեղջկուհին»:

Թերթում տպագրված Վ. Ցեյտլինի «Բանվորուհիների միջազգային օրը», Ե. Պրեդրաժենսկու «Բանվորուհու դերը պրոլետարիատի դիկտատուրայի համար մղվող կռիվում» հոդվածները ունեն իմացական ու ճանաչողական նշանակություն: Իսկ Ֆ. Վարդանյանը իր «Հիշողություն 1921 թվականի Մարտի 8-ի մասին» ելույթում ընթերցողներին պատմում է, թե ինչպես է մեկ տարի առաջ կանանց միջազգային օրը տոնվել Վրաստանում՝ սահմանափակվելով միայն Թիֆլիսով: Իսկ Լ. Դասվիանու «Օգնեցեք սովյալներին» հոդվածում նկարագրվում է Ռուսաստանի Մերձվոլգյան շրջանում մոլեգնող սովն ու համաճարակը, տեղի բնակչության, հատկապես կանանց ու երեխաների ողբերգական վիճակը, և վերջում կոչ է արվում ամեն ձևով ցուցաբերել օգնություն սովյալներին ու հիվանդներին:

Թերթում տպագրված «Ս. Ն.»-ի «Արիեստակցական շարժումը և բանվորուհին» և «Կանանց շարժումը» հոդվածներում ներկայացվում է Մարտի 8-ի տոնակատարության միջազգային նշանակությունը: Իսկ «Կանանց միջազգային տոնը արևմտյան երկրներում» հաղորդման մեջ նկարագրված են կանանց հեղափոխական շարժումներն ու ցույցերը Եվրոպայում՝ հանուն քաղաքական ու սոցիալական ազատագրության:

Թերթի առաջին էջում տպագրված են նաև Կոմինտերնի միջազգային քարտուղարության անդամներ Կ. Ցետկինի և Ա. Կոլոնտայի, ինչպես և կանանց հեղափոխական շարժման ակտիվ մասնակից Գասպարովայի լուսանկարները: Ձեռնդրված են «Բանվորուհու Ինտերնացիոնալը» և «Բանվորից՝ բանվորուհուն» անստորագիր բանաստեղծությունները:

Վրաստանի կոմկուսի Թիֆլիսի կոմիտեի ագիտպրոպ բաժնի կողմից 1923 թ. Թիֆլիսում հրատարակվել է նաև «**Միջազգային դրությունը**» վերնագրով միօրյա թերթը, որի ոչ մի օրինակ նույնպես մեզ չի հաջողվել հայտնաբերել: Այս թերթի մասին ևս առաջին անգամ հիշատակված է Մ. Բաբլոյանի համահավաք ցուցակում¹⁵: Սակայն թե ինչ աղբյուրներից է օգտվել մատենագետը, այդ մասին նա ոչ մի տեղ չի նշում:

1920-ական թթ. սկզբներին միօրյա թերթեր է հրատարակել նաև ՌԿԵՄ Անդրերկոմը: Դրանցից առաջինը նվիրված է հակակրոնական քարոզչությանը: Այն յուրատեսակ արձագանք էր 1919 թ. մարտին կայացած ՌԿ(բ)Կ VIII համագումարում ընդունված կուսակցության II ծրագրում տեղ գտած հակակրոնական ու հակաեկեղեցական դիրքորոշմանը¹⁶:

Նույնպիսի միտվածություն ուներ նաև ՌԿԵՄ Անդրերկոմի հրատարակած «**Կորչի կրոնը**» միօրյա պատկերազարդ թերթը¹⁷, որը նվիրված է

¹⁵ Տե՛ս Մ. Բաբլոյան, նշվ. աշխ., էջ 451:

¹⁶ Տե՛ս «ՍՍԿՊ-ն բանաձևերում ու որոշումներում», մաս I, Եր., 1954, էջ 532:

¹⁷ «Կորչի կրոնը» թերթը չունի լույսընծայման տարեթիվ ու ամիս: Նշված չեն նաև խմբագիրն ու տպաքանակը: Ծավալը՝ 4 էջ, չափսը՝ 54 X 36 սմ: Սակայն թերթում տպագրված նյութերից կարելի է ենթադրել, որ այն լույս է տեսել 1923 թ. ապրիլին, Ձատկի օրերին: Այդ ժամանակ Ձատկի օրերը համարվել են ոչ աշխատանքային և անցկացվել են ապրիլի 7-9-ը: Հավանական է, որ թերթը տպագրված լինի ապրիլի 6-ին կամ 7-ին: Այդ տոնական օրերի մասին տե՛ս նաև «Մարտակոչ» օրաթերթի 1923 թ. ապրիլի 4-ի № 32-ում և ապրիլի 6-ի № 34-ում:

երտասարդության աթեիստական դաստիարակությանը և «Կոմերիտմիության գատիկին»: Թերթի վերնագիրն արդեն շատ բան է ասում նրանում տպագրված նյութերի բովանդակության մասին:

Ուշագրավ է, որ թերթում փորձ է արվում բացահայտելու նաև հակակրոնական աշխատանքներում տեղ գտած սխալներն ու բացթողումները. կուսակցության գծից շեղումներ, հավատացյալների կրոնական զգացմունքների վիրավորում ու ոտնահարում, վարչարարություն ու անհարկի միջամտություններ և այլն:

Հավելենք, որ կուսակցությունը հետագայում անդրադառնալով հակակրոնական աշխատանքներում նկատված սխալներին ու թերություններին՝ ընդունել է հար և նման որոշումներ, տվել համապատասխան հանձնարարություններ¹⁸:

Մայիսմեկյան տոնին է նվիրված մյուս՝ «Կարմիր Մայիս» միօրյա երիտասարդական թերթը¹⁹: Այն բացվում է «Բանվոր երիտասարդությունը և Մայիսի Մեկը» առաջնորդող հոդվածով:

Թերթում տպագրված մի շարք հակիրճ հոդվածներում՝ «Բանվոր երիտասարդությունը և Մայիսի Մեկը», «Երիտասարդ աշխատավորուհին և Մայիսի Մեկը» և այլն, վեր են հանվում այդ տոնակատարության նշանակությունը և երիտասարդության խնդիրները: Մեկ այլ հոդվածում տրված է մայիսմեկյան տոնի առաջացման պատմությունը: Հոդվածներ կան նվիրված Վրաստանի կոմերիտմիության աշխատանքային հաջողություններին ու անելիքներին: Գեղեցիկ ու ճաշակով են ձևավորված թերթի էջերը, որոնցում զետեղված են նաև աչքի ընկնող լուսանկարներ ու կոչեր: Դրանք, երիտասարդությանը նորանոր սխրանքների կոչելով, վեր են հանում մայիսմեկյան տոնի միջազգային կարևոր նշանակությունը:

Կոոպերացիայի միջազգային ընկերության գործադիր կոմիտեի 1923 թ. ապրիլի 21-ին կայացած լիազումար նիստում որոշվում է ամեն տարի հուլիս ամսվա առաջին շաբաթ օրը նշել որպես «Կոոպերացիայի միջազգային օր»: 1924 թ. հուլիսի 5-ին աշխարհում առաջին անգամ նշվում է այդ օրը:

Խորհրդային երկրում կարևորելով այդ միջոցառումը, ստեղծվում էին տոնակատարությունը կազմակերպող հանձնաժողովներ, տարվում էր բացատրական աշխատանք:

Այդ նպատակն էր հետապնդում նաև Վրաստանի կոոպերացիայի տոնը անցկացնող կենտրոնական հանձնաժողովի նախաձեռնությամբ Թիֆլիսում հրատարակված «Կոոպերացիայի միջազգային տոնը» միօրյա թերթը²⁰, որը ամբողջությամբ նվիրված է այդ օրվան և լույս է տեսել 1924 թ. հուլիսի 5-ին:

Այն բացվում է «Կոոպերացիայի օրը և միջազգային կոոպերատիվային շարժման քաղաքական խնդիրները» առաջնորդողով, որում ի մասնավորի ասված է. «Խորհրդային կոոպերացիան մի մասն է միջազգային կոոպերա-

¹⁸ Տե՛ս «ՍՍԿՊ-ն բանաձևերում ու որոշումներում», մաս II, Եր., 1955, էջ 65-66:

¹⁹ «Կարմիր Մայիս» միօրյա թերթը լույս է տեսել 1923 թ. մայիսի 1-ին: Ծավալը՝ 4 էջ, չափսը՝ 53 X 37 սմ, տպաքանակը՝ 1000: Խմբագիրը չի նշված:

²⁰ «Կոոպերացիայի միջազգային տոնը» թերթը ունի «Խմբագրական կոլեգիա» ստորագրությունը: Ծավալը՝ 4 էջ, չափսը՝ 70 X 52 սմ: Տպաքանակը՝ 1000:

տիվ ընտանիքի: Միայն այդ երկրում վերջնականապես հաստատվեց աշխատանքի իշխանությունը և ժողովուրդների իսկական եղբայրությունը: Այդ երկրում էլ կարող է ազատ զարգանալ կոոպերացիան»: Թերթն իր ընթերցողների ուշադրությունը բևեռում է հատկապես ֆաշիզմի վտանգավորության և իմպերիալիզմի կողմից նոր պատերազմ սանձազերծելու վրա: «Այդ տեսակետից էլ, – ընդգծում է թերթը, – առանձին երկրների կոոպերատիվ միացումների միջև առաջանում է գաղափարական կապի և գործի միասնության անհրաժեշտությունը: Միջազգային կոոպերատիվ միությունը պետք է դառնա իսկական կոոպերատիվային ինտերնացիոնալ: Ուստի և հեղափոխական կոոպերատորների առջև դրված է դեղին դեկավարների գաղափարական ազդեցությունից կոոպերացրած բանվորների և գյուղացիների ազատագրման իսկայական խնդիր: Միջազգային կոոպերատիվային տոնը պետք է դառնա այդ ազատագրման պայքարի օրը»:

Այնուհետև թերթի տարբեր էջերում զետեղված են մտքեր ու ասույթներ կոոպերացիայի վերաբերյալ: Թերթում տպագրված են նաև ՌԿ(Բ)Կ XIII համագումարի՝ «ԽՍՀՄ կոոպերացիայի մասին» ընդունած բանաձևի առանձին դրույթները, որոնք ընթերցողին պարզաբանում են այդ կազմակերպության քաղաքական ու տնտեսական նշանակությունը: Թերթը, վկայակոչելով ՌԿ(Բ)Կ XIII համագումարի որոշումը կոոպերացիայի մասին, գրում է. «Ներկայումս կուսակցության և խորհրդային իշխանության ամենաթույլ կողմը վատ առևտուրը և թույլ կոոպերացիան է: Կուսակցության XIII համագումարը դրա վրա լուրջ ուշադրություն դարձրեց և մատնանշեց մի շարք միջոցներ կոոպերացիան ամրացնելու և զարգացնելու համար: Մեր նպատակը պիտի լինի XIII համագումարի դիրեկտիվները կյանքի մեջ կիրառելը»:

ՌԿ(Բ)Կ Անդրերկրմի գլխավոր քարտուղար Ալ. Մյասնիկյանը իր «Մեր կոոպերացիայի դերի մասին» հոդվածում** վեր է հանում այդ նորաստեղծ կազմակերպության կարճ ժամկետում ձեռք բերած հեղինակությունը, նաև ցույց է տալիս կուսակցության մեծ հոգատարությունը կոոպերացիայի նկատմամբ: Նա, հենվելով կոոպերացիայի վերաբերյալ Կ. Մարքսի հայացքների վրա և վկայակոչելով Վ. Ի. Լենինի «Կոոպերացիայի մասին» հանրահայտ աշխատությունը, հիմնավորում է հեղափոխությունից հետո երկրի քայքայված տնտեսության վերականգնման գործում կոոպերացիայի խաղացած դերը: «Մեր կոոպերացիան մի ամբողջ սոցիալական գործ է, ուժեղ կոոպերատիվային կազմակերպություններ ունենալով, դրանցով կարգի բերել առևտուրը, արդյունաբերությունը, ժամանակակից հասարակության սոցիա-

** Ալ. Մյասնիկյանի (1886–1925) սույն հոդվածը ընդգրկված չէ նրա երկերի ժողովածուներից ոչ մեկում: Հայտնի է, որ կուսակցական-պետական ականավոր գործչի և տաղանդավոր գրականագետի ու հրապարակախոսի «Ընտիր երկերը» ցարդ տպագրվել են երկու անգամ. առաջինը՝ հայերեն (Ալ. Մյասնիկյան, Ընտիր երկեր, Եր., 1957) և երկրորդը՝ ռուսերեն (Мясникян А. Ф. Избранные произведения. Ер., 1965): Ալ. Մյասնիկյանի երկերի լիակատար ժողովածուն, որ հինգ հատորով հրատարակության էր պատրաստվում ԽՍՀՄ կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի–ՀԿԿ կենտկոմին առընթեր կուսպատմության ինստիտուտի կողմից, ցավոք, այդպես էլ ավարտին չհասցվեց, այլ լույս տեսավ միայն չորս հատորը (Ալ. Մյասնիկյան, Երկեր հինգ հատորով, հ. 1–4, Եր., 1984–1986): Այս հրատարակության 5-րդ հատորը, որ նախատեսված էր լույս ընծայել երկու գրքով և ընդգրկելու էր նրա խորհրդային շրջանի (1920–1925) գրականագիտական և հրապարակախոսական ողջ ժառանգությունը, հավանաբար ներառելու էր նաև «Մեր կոոպերացիայի դերի մասին» հոդվածը:

լիստական կազմակերպությունը, շաղկապը գյուղացիության հետ, նոր վերակրթության գործը և այլն... Առանց կոոպերացիայի պետական առևտուր չի կարող լինել: Առանց կոոպերացիայի չի կարող շաղկապ ստեղծվել պրոլետարիատի և գյուղացիության միջև: Առանց կոոպերացիայի սոցիալիզմ չկա», – գրում է կուսակցական-պետական ականավոր գործիչը:

Կոոպերացիայի՝ որպես միջազգային կազմակերպության առաջացման, զարգացման ու անցած փուլերի մասին է խոսվում Գ. Պիճիկյանի «Միջազգային կոոպերատիվային այլաներ» ծավալուն հոդվածում: Իսկ «Կոոպերացիան և պայքարը մասնավոր կապիտալի դեմ» (Ա. Երկոմիաշվիլի), «Նոր կուրս գյուղացիական կոոպերացիայում» (Ի. Վոյեյկով), «Կինը և կոոպերացիան» («Ա. Կ.»), «Ի՞նչ ասաց կուսակցական XIII համագումարը կոոպերացիայի մասին» (Լ. Խինչուկ) նյութերում բացահայտվում է խորհրդային կոոպերացիայի համամիութենական ու միջազգային նշանակությունը, նրա դերը երկրի տնտեսական զարգացման գործում: Վերջապես, Պ. Մեհրաբյանն իր «Անդրկովկասյան կոոպերացիան միջազգային տոնին» վերտառությամբ հաղորդման մեջ թվերով ու փաստերով փորձում է ապացուցել Հայաստանի կոոպերացիայի առավելությունները մյուս հանրապետությունների նկատմամբ՝ ցույց տալով կարճ ժամկետում նրա ունեցած մեծ նվաճումները: Թերթն իր ընթերցողներին հավաստի օրինակներով ցույց է տալիս, որ մասնավոր առևտրի դեմ պայքարը հնարավոր է միայն երկրում կոոպերացիան ուժեղացնելով ու նրա ընդլայնմանը նպաստելով:

Թերթում տպագրված են նաև այլ նյութեր ու նկարներ, որոնք ևս ընթերցողներին լայն պատկերացում են տալիս կոոպերացիայի սկզբնավորման ու անցած ուղու մասին: «Կոոպերացիայի միջազգային տոնը» թերթի լուսընծայումը ժամանակի հասարակական-քաղաքական կարևոր ձեռնարկումներից էր: Իր բովանդակությամբ ու արծարծած հարցերով այն ծառայել է Անդրկովկասի սոցիալ-տնտեսական կյանքի աշխուժացմանն ու առևտրի ոլորտում կուսակցության գծի հաղթանակին:

Այսպիսով, Վրաստանում լույս տեսած միօրյա թերթերը հայ նորագույն մամուլի պատմության մեջ ունեն իրենց ուրույն տեղը: Դրանց նպատակն էր նպաստել կոմունիստական կուսակցության որոշումների կենսագործմանը, ծառայել երկրի սոցիալ-տնտեսական ու կուլտուրական վերափոխումների իրականացման գործին: Այդ թերթերը աշխատավորությանը ծանոթացրել են միջազգային տոների ու օրերի պատմությանը, նվիրվել են այլևայլ հրատապ խնդիրների լուծմանը, արծարծել են խորհրդային պետության վարած ներքին ու արտաքին քաղաքականության առանձին հարցեր՝ նպաստելով ընթերցողների աշխարհայացքի ձևավորմանն ու գիտելիքների հարստացմանը: Այդ հրատարակությունները, հիմնականում լինելով տոնական, ժամանակի տպագրատեխնիկական սուղ հնարավորությունների սահմաններում տպագրվել են որակով, ձևավորվել գեղեցիկ ու ճաշակով, նյութերն ու նկարները էջերում դասավորված են համաչափ, վերնագրերն ու կոչերը զբաղեցնում են աչքի ընկնող տեղեր, տառատեսակները ևս ընտրված են այն հաշվարկով, որ կրթական ցածր մակարդակ ունեցող ընթերցողների համար լինեն դյուրընթեռնելի: Այս ամենով հանդերձ՝ հիշյալ թերթերը արժեքավոր տեղեկություններ են պարունակում Վրաստանի 1920-ական թթ. տնտեսական, հասարակական-քաղաքական

կյանքի մասին և օգնում են մեզ ճիշտ հասկանալու ու գնահատելու բարդ ու հակասական այդ ժամանակաշրջանը:

ВЛАДИМИР МАГАЛЯН – *Общая характеристика советских армянских однодневных газет в Грузии.* – В первые годы советской власти появились новые виды печати, весьма оперативные, быстро распространяемые среди широких масс и понятные им. Такими, в частности, были однодневные газеты. Они издавались один раз и были связаны с теми или иными общественно-политическими мероприятиями, юбилейными датами и т. п. Однодневные газеты разъясняли массам смысл и значение всех этих дат, мероприятий и праздников. У изданий такого рода имелись признаки, присущие периодике (заголовок, редактор или редакционная коллегия, выходные данные, включая день, месяц и год выхода в свет, адрес и наименование издающей организации и типографии, тираж). Однако у них отсутствовал важнейший признак периодики – указание на номер. Эти газеты выходили в свет единожды, потому и назывались однодневными.

Тем не менее в статье предпринимается попытка доказать, что однодневные издания также относятся к периодической печати. С этой целью впервые анализируются материалы и оформление ряда газет, изданных в 1920-е годы в Тифлисе. Эти газеты сыграли свою роль в социальных преобразованиях, антирелигиозной пропаганде, борьбе за раскрепощение женщины. Кроме того, прослеживается их воздействие на экономическую, общественно-политическую и культурную жизнь.

VLADIMIR MAGHALIAN – *General characteristics of one-day Soviet Armenian newspapers in Georgia.* – Having studied, analyzed and compared contradictory views by well-known Armenian historians and bibliographers, the author seeks to prove that one-day newspapers must be ranked among press periodicals.

The author believes one-day Armenian newspapers in Soviet Georgia to have played a significant role in the social-economical, civil-political and cultural life of the country. In this respect, the mentioned newspapers have their indisputable place in the recent history of the Armenian journalism in Georgia.